Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄ ԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Մի կողմից՝ Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը, Տաջիկստանի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը, որոնք Եվրասիական տնտեսական համագործակցության հակաճգնաժամային հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադիր պետություններն են՝ Եվրասիական տնտեսական համագործակցության հակաճգնաժամային հիմնադրամի ստեղծման մասին 2009 թ. հունիսի 9-ի պայմանագրի (այսուհետ՝ Հիմնադրամի ստեղծման մասին պայմանագիր) հիման վրա, և

մյուս կողմից՝ Եվրասիական զարգացման բանկը, որը Բանկի մասնակից պետությունների շուկայական տնտեսության կայացմանը և զարգացմանը, նրանց տնտեսական աճին և նրանց միջև առևտրատնտեսական կապերի ընդլայնմանն աջակցելու նպատակով Եվրասիական զարգացման բանկի հիմնադրման մասին 2006 թ. հունվարի 12-ի համաձայնագրին համապատասխան ստեղծված միջազգային կազմակերպություն է (այսուհետ՝ Բանկ),

այսուհետ՝ Կողմերը,

հաշվի առնելով, որ.

Հիմնադրամի ստեղծման մասին պայմանագրով նախատեսված է, որ Հիմնադրամի միջոցների կառավարումն իրականացվում է Հիմնադրամի խորհրդի կողմից Հիմնադրամի միջոցների կառավարչի հետ համատեղ, Հիմնադրամի ստեղծման մասին պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հիմնադրամի մասին կանոնադրությամբ (այսուհետ՝ Հիմնադրամի մասին կանոնադրություն) նախատեսված կարգով, և որ Բանկի և Հիմնադրամի հիմնադիր պետությունների միջև կնքված՝ Հիմնադրամի միջոցների կառավարման մասին համաձայնագրի հիման վրա Հիմնադրամի միջոցների կառավարչի գործառույթների կատարումը դրվում է Բանկի վրա,

Բանկի կանոնադրության 9-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ Բանկն իրավունք ունի Բանկի խորհրդի որոշմամբ ստանձնելու Բանկի մասնակիցների, մասնակիցների խմբի կամ այլ կազմակերպությունների կողմից ձևավորված հատուկ ֆոնդերի կառավարման պարտավորությունները՝ Բանկի նպատակներին և գործառույթներին համապատասխանող խնդիրները լուծելու համար,

Բանկի խորհրդի կողմից որոշում է ընդունվել Հիմնադրամի միջոցների կառավարման պարտավորությունները ստանձնելու մասին (Բանկի խորհրդի նիստի՝ 2009թ. հունիսի 9-ի թիվ 22 արձանագրություն),

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1
Համաձայնագրի առարկան

1. Սույն Համաձայնագրով Կողմերը սահմանում են Հիմնադրամի միջոցների համատեղ կառավարման կարգը:

2. Հիմնադրամի հիմնադիր պետությունները, ինչպես նաև Հիմնադրամի մասին կանոնադրության համապատասխան սույն Համաձայնագրին միացած և Հիմնադրամի մասնակիցներ դարձած պետությունները և միջազգային կազմակերպությունները (այսուհետ՝ Հիմնադրամի մասնակիցներ) իրականացնում են Հիմնադրամի միջոցների կառավարումը Հիմնադրամի խորհրդի միջոցով, որի իրավասությունները սահմանված են Հիմնադրամի մասին կանոնադրությամբ:

Սույն Համաձայնագրով սահմանված կարգով և պայմաններով Բանկը ստանձնում է Հիմնադրամի միջոցների կառավարչի գործառույթների կատարումը, որոնք ընդգրկվում են Հիմնադրամի միջոցների տնօրինման և վարչական կառավարման մեջ:

3. Սույն Համաձայնագրով նախատեսված գործառույթների իրականացման և այդ նպատակով գործարքների կնքման ժամանակ Բանկը նշում է, որ գործում է որպես Հիմնադրամի միջոցների կառավարիչ:

Գրավոր ձևակերպում չպահանջող գործողությունների կատարման ժամանակ Բանկը մյուս կողմին տեղեկացնում է, որ դրանք այդ ձևով են կատարվել, իսկ գրավոր փաստաթղթերում իր անվանումից հետո նշում է. «ԵվրԱսՏՀ-ի հակաճգնաժամային հիմնադրամի միջոցների կառավարիչ»:

4. Հիմնադրամի միջոցների կառավարչի գործառույթների կատարման ժամանակ Բանկը գործում է Հիմնադրամի մասին կանոնադրության 2-րդ հոդվածում թվարկված Հիմնադրամի փաստաթղթերին համապատասխան (այսուհետ՝ Հիմնադրամի փաստաթղթեր)՝ առաջնորդվելով բացառապես Հիմնադրամի մասնակիցների շահերով և Հիմնադրամի ստեղծման նպատակներով, և գործադրում է բոլոր հնարավոր ջանքերը Հիմնադրամի միջոցների արդյունավետ կառավարումն ապահովելու համար:

5. Հիմնադրամի մասնակիցներ հանդիսացող պետությունները սույնով Հիմնադրամի միջոցների և Հիմնադրամի գործառնությունների նկատմամբ տարածում են Բանկի անձեռնմխելիությունները, առավելությունները և արտոնությունները, որոնք նախատեսված են նրա հիմնադիր փաստաթղթերով, և երաշխավորում են դրանց գործողությունը իրենց իրավազորության շրջանակներում:

Հոդված 2
Հիմնադրամի միջոցների տնօրինումը

1. Բանկին իրավունք է ընձեռվում տնօրինելու Հիմնադրամի բոլոր միջոցները, ներառյալ Հիմնադրամի մասնակիցների կողմից իրենց կենտրոնական (ազգային) բանկերի հաշիվներին փոխանցված դրամական միջոցները՝ որպես Հիմնադրամին կատարվող դրամական վճարումներ:

Հիմնադրամի մասնակիցների կողմից իրենց կենտրոնական (ազգային) բանկերի հաշիվներին որպես Հիմնադրամին կատարվող դրամական վճարումներ փոխանցված դրամական միջոցների տնօրինման Բանկի իրավունքը նախատեսվում է Հիմնադրամի մասնակիցների կողմից կենտրոնական (ազգային) բանկերի հետ կնքվող բանկային հաշվի համապատասխան պայմանագրերում:

2. Հիմնադրամի միջոցները պատկանում են Հիմնադրամի մասնակիցներին: Հիմնադրամի միջոցների տնօրինման իրավունքը Բանկին ընձեռելուց չի հետևում, որ դրանց նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է Բանկին:

3. Հիմնադրամի միջոցների տնօրինման շրջանակներում Բանկը Հիմնադրամի մասնակիցների անունից և նրանց հանձնարարությամբ իրականացնում է հետևյալ իրավաբանական գործողությունները.

ա) ԱՄՆ դոլարով և եվրոյով հաշիվներ է բացում և վարում՝ բանկերում Հիմնադրամի խորհրդի կողմից հաստատված Հիմնադրամի միջոցներով գործառնություններ իրականացնելու համար (այսուհետ՝ Հիմնադրամի հաշիվներ), գործառնություններ է իրականացնում նշված հաշիվներով, ինչպես նաև սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում հիշատակված կենտրոնական (ազգային) բանկերում Հիմնադրամի մասնակիցների հաշիվներով՝ Հիմնադրամի փաստաթղթերին և սույն Համաձայնագրի պայմաններին համապատասխան:

բ) Հիմնադրամի հաշիվներին է հաշվեգրում Հիմնադրամ մտնող բոլոր դրամական միջոցները, ներառյալ՝

- վճարումները՝ բացառությամբ իրենց կենտրոնական (ազգային) բանկերի հաշիվներին Հիմնադրամի մասնակիցների կողմից փոխանցված՝ Հիմնադրամին կատարվող դրամական վճարումների,
- Հիմնադրամի ժամանակավորապես չօգտագործվող միջոցների տեղաբաշխումից (ներդրումից) ստացված մուտքերը,
- վերադարձելիության հիմունքով Հիմնադրամի միջոցների տրամադրումից ստացված մուտքերը, ներառյալ Հիմնադրամի միջոցների տրամադրման մասին համաձայնագրերով կատարվող բոլոր վճարները,
- Հիմնադրամին կատարվող նվիրաբերությունները,
- Հիմնադրամին ուղղված այլ մուտքերը:

Ոչ ԱՄՆ դոլարով կամ եվրոյով Հիմնադրամին կատարված բոլոր վճարումները Բանկը փոխարկում է ԱՄՆ դոլարի կամ եվրոյի սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան կերպով որոշվող փոխարժեքով:

գ) Հիմնադրամի խորհրդի որոշման հիման վրա Հիմնադրամի մասնակիցների կողմից հանձնված պարտամուրհակները ներկայացնում է վճարման:

դ) Հիմնադրամի խորհրդի որոշման հիման վրա ընդունում է Հիմնադրամին ուղղված նվիրաբերություններ:

ե) Հիմնադրամի խորհրդի որոշման հիման վրա Հիմնադրամի միջոցներից ֆինանսավորում տրամադրելու վերաբերյալ համաձայնագրեր է կնքում Հիմնադրամի միջոցներն ստացողների հետ (այսուհետ՝ Հիմնադրամի միջոցների տրամադրման մասին համաձայնագրեր), ապահովում է կնքվող համաձայնագրերի համապատասխանությունը Հիմնադրամի խորհրդի որոշումներով և Հիմնադրամի մասին կանոնադրությամբ նախատեսված պահանջներին:

զ) Հիմնադրամի միջոցների տրամադրման մասին համաձայնագրերով իրականացնում է Հիմնադրամի միջոցների տրամադրումը՝ այդ Համաձայնագրերի պայմաններին համապատասխան:

է) Ներկայացնում և պաշտպանում է Հիմնադրամի մասնակիցների շահերը՝ կապված Հիմնադրամի միջոցների տրամադրման մասին համաձայնագրերի, Հիմնադրամի միջոցների օգտագործմամբ կատարվող այլ գործարքների և Հիմնադրամի շրջանակներում իրականացվող գործունեությանն առնչվող այլ հարցերի հետ:

ը) Հիմնադրամի խորհրդի կողմից հաստատվող կարգին համապատասխան՝ ավանդներում ներդնում և/կամ տեղաբաշխում է Հիմնադրամի այն միջոցները, որոնք մոտ ժամանակում ֆինանսավորման տրամադրման նպատակով օգտագործելու համար չեն պահանջվում:

թ) Հիմնադրամի մասնակիցների կազմից Հիմնադրամի մասնակցի դուրս գալու դեպքում նրա հետ համաձայնագիր է կնքում Հիմնադրամի խորհրդի որոշման հիման վրա Հիմնադրամի միջոցներում Հիմնադրամի այդ մասնակցի մասնաբաժինը վճարելու ժամկետի և կարգի վերաբերյալ, իրականացնում է վճարումները՝ ըստ այդ համաձայնագրերի:

ժ) Հիմնադրամի գործառնությունների դադարեցման դեպքում Հիմնադրամի յուրաքանչյուր մասնակցին փոխանցում է Հիմնադրամի միջոցներում նրա մասնաբաժինը՝ Հիմնադրամի խորհրդի կողմից սահմանվող կարգով և պայմաններով:

ժա) սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի 7-րդ կետով նախատեսված դեպքում Հիմնադրամի միջոցները և Հիմնադրամի միջոցների տնօրինման գործունեության արդյունքում ձևավորված ակտիվները փոխանցում է Հիմնադրամի խորհրդի կողմից նշանակված անձին (անձանց) Հիմնադրամի խորհրդի կողմից սահմանված կարգով:

ժբ) Իրականացնում է այլ անհրաժեշտ փաստական և իրավաբանական գործողություններ, որոնք կարող են պետք լինել Հիմնադրամի միջոցների արդյունավետ տնօրինման համար, բացառությամբ այն գործողությունների, որոնք վերաբերում են

Հիմնադրամի խորհրդի, Հիմնադրամի փորձագիտական խորհրդի և Հիմնադրամի խորհրդի քարտուղարության իրավասությանը և վերապահված չեն Հիմնադրամի միջոցների կառավարչին:

4. Բանկն իրականացնում է Հիմնադրամի միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումների կառավարումը Բանկի գնումների սեփական կանոնների և ընթացակարգերի համաձայն և Միջպետական ներդրումային նախագծերը ֆինանսավորելու համար Հիմնադրամի միջոցների տրամադրման մասին համաձայնագրերում նախատեսում է Հիմնադրամի միջոցներն ստացողների կողմից գնումների նշված ընթացակարգերին հետևելու պարտավորությունները:

5. Արտակարգ իրավիճակում Բանկը Հիմնադրամի խորհրդի որոշմամբ կասեցնում է Հիմնադրամի միջոցների տրամադրման մասին նոր համաձայնագրերի կնքումը և Հիմնադրամի միջոցներով այլ գործարքների կատարումը մինչև Հիմնադրամի խորհրդի կողմից ստեղծված իրավիճակի քննարկումը և անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը:

Հոդված 3
Հիմնադրամի միջոցների հաշվառումը

1. Բանկի տնօրինմանը հանձնված Հիմնադրամի միջոցները Բանկը գրանցում է առանձին հաշվեկշռում և դրանով վարում է ինքնուրույն, առանձին հաշվառում:

2. Բանկը Հիմնադրամի միջոցներն առանձնացնում է Բանկի ունեցվածքից (ակտիվներ, կապիտալ և սովորական ռեսուրսներ) և Բանկի հիմնադիր փաստաթղթերին համապատասխան ստեղծված այլ հատուկ ֆոնդերի ռեսուրսներից:

3. Բանկը Հիմնադրամի միջոցների հաշվառումն իրականացնում է հաշվապահական (ֆինանսական) հաշվառման վարման և հաշվապահական (ֆինանսական) հաշվետվության կազմման այն նույն սկզբունքներով, որոնք նա կիրառում է սեփական հաշվեմատյանների և հաշիվների նկատմամբ:

Նշված սկզբունքները նախատեսում են հաշվառման փաստաթղթային հիմնավորման կատարում, հաշվապահական հաշիվների վարում և ֆինանսական հաշվետվության կազմում՝ Ֆինանսական հաշվետվության միջազգային չափանիշներին համապատասխան, որոնք հետևողականորեն կիրառվում են և պատշաճ կերպով արտացոլում են Հիմնադրամի շրջանակներում իրականացվող գործունեության հետ կապված ռեսուրսները, ծախսերը և գործողությունները:

4. Բոլոր դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում որոշելու մի արժույթի փոխարժեքը մեկ այլ արժույթի նկատմամբ, Բանկի կողմից արժույթի փոխարժեքի որոշումը կատարվում է այն նույն սկզբունքների

կիրառմամբ, որոնք Բանկի կողմից օգտագործվում են իր գանձապահական գործառնություններն իրականացնելու համար:

Հոդված 4
Հիմնադրամի միջոցների վարչական կառավարումը

1. Հիմնադրամի միջոցների վարչական կառավարումն իրականացնելու շրջանակներում Բանկը կատարում է հետևյալ գործառույթները.

ա) պատրաստում և Հիմնադրամի փորձագիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում բանկերին վերաբերող հիմնավորված առաջարկություններ Հիմնադրամի հաշիվների բացման համար,

բ) կատարում է Հիմնադրամի մասնակիցների ցուցակագրումը և Հիմնադրամի խորհրդում Հիմնադրամի մասնակիցների ձայների քանակի հաշվառումը,

գ) պատրաստում և Հիմնադրամի փորձագիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում Հիմնադրամի միջոցների հաշվին ֆինանսավորվող գործունեության տարեկան ծրագրերի նախագծերը և Հիմնադրամի միջոցների կառավարչի՝ Հիմնադրամի միջոցների կառավարման հետ կապված վարչական ծախսերի նախահաշիվները, ինչպես նաև դրանց կատարման մասին հաշվետվությունները,

դ) ամեն տարի պատրաստում և Հիմնադրամի փորձագիտական խորհրդի քննարկմանն ու հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի գործառնությունների վերաբերյալ տարեկան ֆինանսական հաշվետվությունը,

ե) Հիմնադրամի խորհրդին տեղեկացնում է Հիմնադրամի հիմնադիր պետությունների և Հիմնադրամի մասնակիցների՝ Հիմնադրամին կատարվող վճարումների հետ կապված պարտավորությունների կատարման մասին,

զ) պատրաստում և Հիմնադրամի փորձագիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում Հիմնադրամի միջոցներից կայունացման վարկերի և անկախ փոխառությունների տրամադրման կարգի, միջպետական ներդրումային նախագծերի ֆինանսավորման համար Հիմնադրամի միջոցների տրամադրման կարգի, Հիմնադրամի ժամանակավորապես չօգտագործվող միջոցների տեղաբաշխման (ներդրման) կարգի (Ներդրումային հայտարարագիր) նախագծերը,

է) իրականացնում է Հիմնադրամի ռեսուրսների ներուժի գնահատումը և, ըստ անհրաժեշտության, վճարումները կատարելու համար Հիմնադրամի խորհրդի առաջ բարձրացնում է պարտամուրհակների վճարման պահանջ ներկայացնելու հարցը,

ը) քննարկում է Հիմնադրամի միջոցներից ֆինանսավորում տրամադրելու մասին հայտերը, կատարում է նշված հայտերի գնահատումը՝ որոշելու համար դրանց համապատասխանությունը Հիմնադրամի շրջանակներում իրականացվող գործունեության նպատակներին, ֆինանսավորման տրամադրման ուղղություններին,

Հիմնադրամի միջոցների տրամադրման կարգին և պայմաններին, որոնք սահմանված են Հիմնադրամի օտեղծման մասին պայմանագրով, Հիմնադրամի մասին կանոնադրությամբ և Հիմնադրամի խորհրդի որոշումներով, ֆինանսավորման առաջնայնությանը և արդյունավետությանը, առաջարկությունների պատրաստվածության աստիճանին և այլ հարցերին, պատրաստում է համապատասխան եզրակացություններ և ներկայացնում է դրանք Հիմնադրամի փորձագիտական խորհրդին՝ դրանք քննարկելու և Հիմնադրամի խորհրդին ուղղված հանձնարարականներ նախապատրաստելու համար,

թ) մշակում է Հիմնադրամի միջոցների տրամադրման մասին համաձայնագրերի նախագծերը, ապահովում է այդ Համաձայնագրերի պայմանների համապատասխանությունը Հիմնադրամի մասին կանոնադրությամբ սահմանված պահանջներին և ֆինանսավորում տրամադրելու մասին Հիմնադրամի խորհրդի որոշումներին, անհրաժեշտության դեպքում մշակում է նշված Համաձայնագրերում փոփոխություններ կատարելու նախագծեր,

ժ) կատարում է Հիմնադրամի միջոցների տրամադրման մասին համաձայնագրերով Հիմնադրամի միջոցներն ստացողների պարտքի հաշվառում, ստացողներին տեղեկացնում է պարտքի չափի և վճարման ենթակա գումարների մասին, իրականացնում է պարտքի սպասարկման և մարման պարտավորությունների կատարման մոնիտորինգ, անհրաժեշտության դեպքում միջոցներ է ձեռնարկում ժամկետանց պարտքը և նշված համաձայնագրերով վճարման ենթակա այլ գումարները բռնագանձելու ուղղությամբ,

ժա) ապահովում է Հիմնադրամի միջոցների տրամադրման մասին համաձայնագրերի հետ կապված պարտավորությունների կատարման մշտական մոնիտորինգ, ներառյալ նախագծերի, այլ գործառնությունների իրականացման մոնիտորինգը, Հիմնադրամի միջոցների տրամադրման պայմանների կատարման մոնիտորինգը, ապահովում է այդ տեղեկատվության մշտական հասանելիությունը Հիմնադրամի մասնակիցների համար, Հիմնադրամի միջոցների տրամադրման մասին համաձայնագրերին ուղեկցող այլ անհրաժեշտ վարչական նյութեր է տրամադրում,

ժբ) կազմակերպում է Հիմնադրամի միջոցների հաշվին իրականացվող նախագծերի և գործառնությունների արդյունավետության գնահատում և այդ գնահատման արդյունքները ներկայացնում է Հիմնադրամի փորձագիտական խորհրդին,

ժգ) Հիմնադրամի խորհրդին ուղղված անհրաժեշտ հանձնարարականներ ընդունելու համար Հիմնադրամի փորձագիտական խորհրդին ներկայացնում է տեղեկատվություն Հիմնադրամի միջոցներն ստացողների կողմից Հիմնադրամի միջոցների տրամադրման մասին համաձայնագրերի պայմանների խախտումների մասին, որոնք այդ համաձայնագրերի պայմաններին համապատասխան կարող են հանգեցնել ֆինանսավորման կասեցման և դադարեցման,

ժդ) անհրաժեշտության դեպքում մշակում և Հիմնադրամի փորձագիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում Հիմնադրամի միջոցներում Հիմնադրամի մասնակիցների մասնաբաժինների որոշման կարգը, ինչպես նաև մասնաբաժինների վճարման կարգի և պայմանների մասին համաձայնագրերի նախագծերը,

ժե) անհրաժեշտության դեպքում մշակում և Հիմնադրամի փորձագիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում Հիմնադրամի գործառնությունների դադարեցման ընթացակարգերը,

ժզ) անհրաժեշտության դեպքում պատրաստում և Հիմնադրամի փորձագիտական խորհրդի քննարկմանն է ներկայացնում Հիմնադրամի ստեղծման մասին պայմանագրում, Հիմնադրամի մասին կանոնադրությունում, սույն Համաձայնագրում և Հիմնադրամի այլ փաստաթղթերում փոփոխությունների նախագծերը,

ժէ) փոխգործակցում է Հիմնադրամի մասնակիցների, Հիմնադրամի խորհրդում Հիմնադրամի մասնակիցների ներկայացուցիչների, Հիմնադրամի փորձագիտական խորհրդի անդամների, Հիմնադրամի միջոցներն ստացողների հետ, ներառյալ Հիմնադրամի միջոցներն ստացող պետությունների կառավարությունները, տեղական իշխանության մարմինները և ստացող պետությունների տեղական ինքնավարության մարմինները, ինչպես նաև այլ պետական և մասնավոր կազմակերպությունները, և այդ փոխգործակցության մասին զեկուցում է Հիմնադրամի փորձագիտական խորհրդին,

ժը) իր հրապարակումներում (տարեկան հաշվետվություն, տեղեկատվական տեղեկագրեր և այլն) բավարար տեղեկատվություն է ներկայացնում Հիմնադրամի և Հիմնադրամի մասնակիցների մասին, ինչպես նաև ստացող պետությունների և զանգվածային լրատվամիջոցների հետ փոխգործակցության ընթացքի մասին,

ժթ) համագործակցում է Հիմնադրամի փորձագիտական խորհրդի հետ, այդ թվում՝ նրա փորձաքննությանն է ներկայացնում Բանկի կողմից Հիմնադրամի խորհրդի քննարկմանը ներկայացվող բոլոր հարցերը, փաստաթղթերը և նյութերը, ըստ Հիմնադրամի փորձագիտական խորհրդի դիտողությունների՝ իրականացնում է դրանց լրամշակումը, Հիմնադրամի փորձագիտական խորհրդի հայցով ներկայացնում է անհրաժեշտ լրացուցիչ տեղեկատվություն և պարզաբանումներ նշված հարցերի, փաստաթղթերի և նյութերի վերաբերյալ,

ի) կատարում է այլ գործառույթներ, որոնք կարող են պահանջվել Հիմնադրամի միջոցների արդյունավետ վարչական կառավարման համար:

2. Բանկն իրավունք ունի ընդունելու Հիմնադրամի փաստաթղթերին համապատասխանող այնպիսի ներքին նորմատիվ փաստաթղթեր, կանոններ և ընթացակարգեր, որոնք կհամարի անհրաժեշտ և նպատակահարմար Հիմնադրամի միջոցների արդյունավետ վարչական կառավարման և տնօրինման համար:

3. Բանկի ներկայացուցիչները ներկա են լինում Հիմնադրամի խորհրդի նիստերին:

4. Անհրաժեշտության դեպքում Բանկը՝ որպես Հիմնադրամի միջոցների կառավարիչ, Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված կարգով Հիմնադրամի խորհրդի արտահերթ նիստեր անցկացնելու և Հիմնադրամի խորհրդի նիստերի օրակարգում լրացուցիչ հարցեր ներառելու վերաբերյալ առաջարկություններ է ուղարկում Հիմնադրամի խորհրդի նախագահին:

5. Բանկը Հիմնադրամի միջոցների կառավարչի գործառույթներն իրականացնելու համար ներգրավում է իր անձնակազմը, երրորդ անձանց՝ փորձագետների (խորհրդատուների), որոնք ունեն անհրաժեշտ հմտություններ և գիտելիքներ, և այլ անհրաժեշտ ռեսուրսներ:

Հոդված 5
Հիմնադրամի միջոցների Կառավարչի՝ Հիմնադրամի միջոցների տնօրինման գործունեության աուդիտը

1. Բանկի կողմից Հիմնադրամի միջոցների կառավարչի գործունեությունն իրականացնելու ուղղությամբ նրա հաշվառման վարումը ստուգելու և տարեկան ֆինանսական հաշվետվության հավաստիությունը հաստատելու համար Բանկն ապահովում է անկախ արտաքին աուդիտի ամենամյա անցկացումը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա առաջին եռամսյակի ավարտը:

Արտաքին աուդիտի անցկացման ծախսերը ամեն տարի նախատեսվում են Հիմնադրամի միջոցների կառավարչի վարչական ծախսերի նախահաշվում և վճարվում են Հիմնադրամի միջոցներից:

2. Արտաքին աուդիտն անցկացվում է նույն կարգով, որը կիրառվում է Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվության նկատմամբ: Աուդիտորական ստուգման ծախսերը վճարվում են Հիմնադրամի միջոցներից և նախատեսվում են Հիմնադրամի միջոցների կառավարչի վարչական ծախսերի նախահաշվում, որը հիշատակվում է սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետում: Աուդիտի անցկացման համար Բանկը, ներքին ընթացակարգերին համապատասխան, ինքնուրույն ընտրում է աուդիտորական ընկերությունը:

3. Ներքին աուդիտն իրականացվում է Բանկի ներքին աուդիտի ծառայության կողմից՝ ներքին ընթացակարգերին համապատասխան:

4. Բանկը Հիմնադրամի մասնակիցներին ուղարկում է Հիմնադրամի միջոցների կառավարման գործունեության մասին տարեկան հաշվետվությունը և աուդիտորական եզրակացությունը դրանք ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվությունը և եզրակացությունները քննարկվում են Հիմնադրամի փորձագիտական խորհրդի և Հիմնադրամի խորհրդի կողմից:

5. Բանկը հրապարակում է Հիմնադրամի միջոցների կառավարման գործունեության մասին տարեկան հաշվետվությունը և ցանկացած այլ հաշվետվություն, որի հրապարակումը նպատակահարմար է համարում Հիմնադրամի նպատակներին հասնելու և Հիմնադրամի միջոցների

կառավարչի իր գործառույթները կատարելու համար՝ ելնելով թափանցիկության սկզբունքներից:

Հոդված 6
Հիմնադրամի միջոցների կառավարչի հաշվետվությունը և ծախսերի վճարումը

1. Հիմնադրամի միջոցների կառավարչի գործառույթները կատարելու հետ կապված ընթացիկ ծախսերը Բանկին փոխհատուցվում են Հիմնադրամի միջոցներից՝ Հիմնադրամի միջոցների կառավարչի՝ Հիմնադրամի միջոցների կառավարման հետ կապված վարչական ծախսերի նախահաշվին համապատասխան, որը հաստատվում է Հիմնադրամի խորհրդի կողմից:

Նշված ծախսերի վճարումից բացի՝ Հիմնադրամի խորհուրդը կարող է, ըստ Հիմնադրամի ֆինանսական տարվա ավարտման արդյունքների, պարգևատրում նշանակել Բանկին՝ որպես Հիմնադրամի միջոցների կառավարչի գործունեության ծրագրված արդյունքներին հասնելու խրախուսում:

2. Բանկն իրականացնում է փաստաթղթային հիմնավորում, որն ամբողջությամբ արտացոլում է նրա՝ որպես Հիմնադրամի միջոցների կառավարչի գործունեությունը, և Հիմնադրամի խորհրդին ներկայացնում է անհրաժեշտ հաշվետվություն՝ իր՝ որպես Հիմնադրամի միջոցների կառավարչի գործունեության մասին:

3. Բանկը պահում է առաջնային հաշվառման բոլոր փաստաթղթերը, որոնք հաստատում են սույն հոդվածի 1-ին կետում հիշատակված ծախսերը և Հիմնադրամի միջոցների օգտագործման հետ կապված մյուս գործառնությունները (ներառյալ պայմանագրերը, ակտերը, հաշիվները, հաշիվ-ապրանքագրերը, մակագրությունները, անդորրագրերը և այլ փաստաթղթերը), Հիմնադրամի գործառնությունների ողջ ժամանակաշրջանի ընթացքում և դրա ավարտից ու Հիմնադրամի միջոցների ծախսման վերջին գործողությունը կատարելու ժամանակահատվածի վերաբերյալ աուդիտորական եզրակացությունը Հիմնադրամի խորհրդի ստանալուց հետո 5 տարվա ընթացքում:

Հոդված 7
Հակահիրավական գործողություններին հակազդելը

1. Բանկը, միջազգային իրավունքի և Հիմնադրամի մասնակից պետությունների ազգային օրենսդրություններին համապատասխան, պատշաճ միջոցներ է ձեռնարկում Հիմնադրամի միջոցների օգտագործման հետ առնչություն ունեցող հակահիրավական գործողությունների մասին նախազգուշացնելու և դրանք կանխելու համար: Բանկը նշված պահանջին առնչվող հղումները ներառում է Հիմնադրամի միջոցների տրամադրման մասին համաձայնագրերում: Ընդ որում՝ Հիմնադրամի միջոցներն ստացողները պարտավորություն

են ստանձնում համապատասխան դրույթները ներառել ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ մատակարարողների հետ Հիմնադրամի միջոցների հաշվին կնքվող բոլոր պայմանագրերում:

2. Հակաիրավական գործողությունների բոլոր դեպքերի մասին Բանկը տեղեկացնում է Հիմնադրամի փորձագիտական խորհրդին և Հիմնադրամի խորհրդին:

Հոդված 8
Կողմերի պատասխանատվությունը

1. Կողմերը փոխադարձ պատասխանատվություն են կրում սույն Համաձայնագրին համապատասխան իրենց պարտավորությունները պատշաճ կերպով կատարելու համար:

Կողմերը ազատվում են նշված պատասխանատվությունից այն դեպքում, եթե համապատասխան պարտավորությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը պայմանավորված է եղել անհաղթահարելի ուժի հանգամանքներով կամ մյուս Կողմի գործողություններով: Պարտավորությունների կատարման ժամկետն այս դեպքում հետաձգվում է այն ժամանակահատվածին համապատասխան ժամանակով, որի ընթացքում գործել են այդ հանգամանքները:

2. Եթե առաջ են գալիս այնպիսի հանգամանքներ, որոնք կարող են հանգեցնել Բանկի կողմից սույն Համաձայնագրով իր պարտավորությունների չկատարման, Բանկը տասնօրյա ժամկետում տեղեկացնում է Հիմնադրամի փորձագիտական խորհրդին և Հիմնադրամի խորհրդին այդ հանգամանքների և Բանկի կողմից ձեռնարկվող միջոցների մասին, որոնք ուղղված են դրանց վերացմանը և սույն Համաձայնագրով նախատեսված պարտավորությունների կատարմանը:

3. Բանկն իր ունեցվածքով պատասխանատու չէ Հիմնադրամի գործառնությունների իրականացման շրջանակներում Հիմնադրամի մասնակիցների անունից իր ստանձնած պարտավորությունների համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդ պարտավորությունների ստանձնման դեպքում Բանկը խախտել է Հիմնադրամի փաստաթղթերի դրույթները:

Հոդված 9
Եզրափակիչ դրույթներ

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներքին ընթացակարգերի կատարման մասին հիմնադիր պետությունների և Բանկի վերջին գրավոր ծանուցումն Ավանդապահի, որը ԵվրԱսՏՀ-ի ինտեգրացիոն կոմիտեն է, ստանալու օրվանից, բայց ոչ շուտ, քան մինչև Հիմնադրամի ստեղծման մասին պայմանագրի ուժի մեջ մտնելը:

Սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է Հիմնադրամի ստեղծման մասին պայմանագրի գործողության դադարեցման հետ միաժամանակ, եթե ավելի վաղ դրա գործողությունը չդադարեցվի՝ սույն հոդվածի 7-րդ կետով նախատեսված կարգին համապատասխան:

2. Սույն Համաձայնագրում փոփոխությունները կատարվում են Կողմերի համաձայնեցմամբ և ձևակերպվում են առանձին արձանագրություններով:

3. Սույն Համաձայնագրին կարող են միանալ այլ պետություններ և հիմնադիր պետությունների ու Հիմնադրամի մասնակիցների կողմից միջազգային կազմակերպություններ՝ Հիմնադրամի ստեղծման մասին պայմանագրին նրանց՝ նշված պայմանագրով նախատեսված կարգով միանալու պայմանով:

Բանկի կողմից որևէ միացում սույն Համաձայնագրին չի թույլատրվում:

Սույն Համաձայնագիրն իրեն միացող պետությունների և միջազգային կազմակերպությունների համար ուժի մեջ է մտնում Հիմնադրամի ստեղծման մասին պայմանագրին և սույն Համաձայնագրին միանալու մասին փաստաթղթերն Ավանդապահի ստանալու օրվանից:

4. Սույն Համաձայնագրի վերաբերյալ վերապահումներ չեն թույլատրվում:

5. Սույն Համաձայնագրի կատարման կապակցությամբ Կողմերի միջև ծագող վեճերը հնարավորության սահմաններում լուծվում են Կողմերի կողմից՝ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Այն դեպքում, երբ այդ վեճերը չեն լուծվել բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով, դրանք վեճի ցանկացած կողմի կողմից փոխանցվում են երեք միջնորդ դատավորներից բաղկացած միջնորդական դատարանի քննարկմանը. այդ դատավորներից մեկը նշանակվում է Հիմնադրամի խորհրդի կողմից, մյուսը՝ Բանկի, երրորդը՝ նշանակված միջնորդ դատավորների համաձայնեցմամբ, կամ եթե միջնորդ դատավորներն իրենց նշանակումից հետո՝ 6 (վեց) ամսվա ընթացքում ընդհանուր համաձայնության չգան, ՄԱԿ-ի միջազգային դատարանի նախագահի կողմից: Երրորդ միջնորդ դատավորի ընտրության ժամանակ ընտրված միջնորդ դատավորներն առաջնորդվում են այն կանոնով, որ նա չպետք է լինի Բանկի ներկայացուցիչ կամ այն պետությունների քաղաքացի և այն միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչ, որոնք սույն Համաձայնագրի մասնակից են:

Միջնորդ դատավորները վեճի լուծման ժամանակ առաջնորդվում են ՅՈՒՆԻՍՏՐԱԼ-ի իրավարարական կանոնակարգով՝ հաշվի առնելով վեճի հանրային-իրավական բնույթը: Իրավարարական դատաքննության լեզուն ռուսերենն է:

Միջնորդ դատավորները որոշումն ընդունում են ձայների մեծամասնությամբ, և նրանց ընդունած որոշումը վեճի կողմերի համար վերջնական և պարտադիր է:

6. Հիմնադրամի ցանկացած մասնակից իրավունք ունի դուրս գալու սույն Համաձայնագրից միաժամանակ Հիմնադրամի մասնակիցների կազմից դուրս գալու պայմանով՝ Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված կարգին համապատասխան: Հիմնադրամի այդ մասնակցի նկատմամբ Հիմնադրամի մասնակիցների կազմից դուրս գալու ընթացակարգի ավարտվելու հետ ինքնաբերաբար դադարեցվում է նրա մասնակցությունը սույն Համաձայնագրին:

7. Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարելու սույն Համաձայնագիրը մյուս Կողմին սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու մասին գրավոր ծանուցում ուղարկելու պայմանով: Այդ դեպքում սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է Հիմնադրամի միջոցները և ակտիվները 2-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված կարգով Բանկի փոխանցելուց և Բանկի՝ Հիմնադրամի միջոցների կառավարչի գործառույթների կատարման հետ կապված և մինչև փոխանցման ընթացակարգի ավարտը կրած ծախսերը փոխհատուցելուց հետո:

Հիմնադրամի հիմնադիրներից, ինչպես նաև սույն Համաձայնագրին միացած պետություններից և միջազգային կազմակերպություններից բաղկացած Կողմի անունից ծանուցումները Հիմնադրամի խորհրդի նախագահն ուղարկում է Բանկին:

Բանկի անունից ծանուցումները նրա լիազորված անձն ուղարկում է Հիմնադրամի խորհրդի նախագահին Հիմնադրամի խորհրդի քարտուղարությանն ուղղված պատճենի հետ:

Սույն Համաձայնագիրը կատարված է 2009 թ. հունիսի 9-ին ք. Մոսկվայում, մեկ ռուսերեն բնօրինակով, որի վավերացված պատճեններն Ավանդապահն ուղարկում է սույն Համաձայնագիրն ստորագրած պետություններից յուրաքանչյուրին և Բանկին:

Սույն Համաձայնագիրն ստորագրվել է Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Տաջիկստանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման բանկի կողմից:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2011թ. հունվարի 24-ին